



# ԵՐԵՎԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

№ 49 «23» 10 2014թ.

ԵՊՀ ֆակուլտետների ղեկավարներին և ամբիոնների վարիչներին՝

*Սույն շրջաբերականի մասին տեղեկացնել էՊՀ աշխատողներին*

## Շ Ր Ջ Ա Բ Ե Ր Ա Կ Ա Ն Ն Ա Մ Ա Կ

«ԵՊՀ աշխատողների և սովորողների արտասահմանյան գործուղումների կազմակերպման կանոնակարգի» համաձայն՝ ԵՊՀ աշխատողների և սովորողների արտասահմանյան գործուղումը, ինչպես նաև գործուղման ժամկետի երկարաձգումը ձևակերպվում է *բացառապես ԵՊՀ ռեկտորի կամ նրա կողմից լիազորված միջազգային համագործակցության համար պատասխանատու պրոռեկտորի հրամանով*։

Արտասահմանյան գործուղում ձևակերպելու համար՝ աշխատողը պարտավոր է *արտասահման մեկնելու օրվանից առնվազն 15 աշխատանքային օր առաջ ԵՊՀ միջազգային համագործակցության վարչություն* ներկայացնել ԵՊՀ համապատասխան կառուցվածքային ստորաբաժանման ղեկավարի զեկուցագիրը (ըստ սահմանված ձևանմուշի), պաշտոնական հրավերի պատճենը և դասախոսի ծանրաբեռնվածությունը փոխարինելու մասին զեկուցագիրը։

Առանց փաստաթղթային ձևակերպման արտասահման մեկնելու, ինչպես նաև արտասահմանում գտնվելու ժամկետը երկարաձգելու դեպքերում աշխատողի աշխատանքի չներկայանալը համարվում է *անհարգելի* և առաջացնում է ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված իրավական հետևանքներ, ընդհուպ *մինչև աշխատանքային պայմանագրի լուծումը*։

Անձնական հարցերով՝ արտասահման մեկնելու պատճառով աշխատանքից բացակայելը թույլատրվում է *ԵՊՀ ռեկտորի հրամանով՝ աշխատողին չվճարվող արձակուրդ ձևակերպելու դեպքում*, ինչի վերաբերյալ դիմումը (համապատասխան հիմնավորմամբ) աշխատողը պարտավոր է ԵՊՀ ռեկտորին ներկայացնել *արտասահման մեկնելու օրվանից առնվազն 5 աշխատանքային օր*։

Առանց չվճարվող արձակուրդ ձևակերպելու արտասահման մեկնած աշխատողի աշխատանքի չներկայանալը համարվում է *անհարգելի* և առաջացնում է ՀՀ աշխատանքային օրենսդրությամբ նախատեսված իրավական հետևանքներ, ընդհուպ *մինչև աշխատանքային պայմանագրի լուծումը*։

ԵՊՀ ՌԵԿՏՈՐ

Ա. Բ. ՍԻՍՈՆՅԱՆ